ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի՝ Շվեդիայի Թագավորությունում (Ստոկհոլմ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Արփինե Սարգսյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Շվեդիայի Թագավորությունում (Ստոկհոլմ), 2022 թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը:

Հրավիրող կողմը՝ Շվեդիայի արբիտրաժային ասոցիացիա:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Բարեվարքությունը միջազգային արբիտրաժում» թեմայով Շվեդական արբիտրաժային օրեր 2022 միջոցառմանը:

Քննարկված թեմաները՝ Միջոցառման ընթացքում քննարկվել են արբիտրների բարեվարքության և էթիկայի կանոնների վերաբերյալ Շվեդական և միջազգային լավագույն փորձը, վեր են հանվել նշված ոլորտում առկա խնդիրները և քննարկվել դրանց լուծման համատեղ հասնելուն առնչվող հարցեր, միջազգային ասպարեզում արդեն իսկ տարվող աշխատանքները և ակնկալվող զարգացումները:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը «Բարեվարքությունը միջազգային արբիտրաժում» թեմայով Շվեդական արբիտրաժային օրեր 2022 միջոցառմանը մասնակցելու նպատակով 2022թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը գտնվել է Շվեդիայի Թագավորությունում (Ստոկհոլմ):

«Բարեվարքությունը միջազգային արբիտրաժում» թեմայով Շվեդական արբիտրաժային օրեր 2022 միջոցառման ընթացքում քննարկվել են արբիտրների բարեվարքության և էթիկայի կանոնների վերաբերյալ Շվեդական և միջազգային լավագույն փորձը, վեր են հանվել նշված ոլորտում առկա խնդիրները և քննարկվել դրանց լուծման համատեղ հասնելուն առնչվող հարցեր, միջազգային ասպարեզում արդեն իսկ տարվող աշխատանքները և ակնկալվող զարգացումները:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Շվեդիան արբիտրաժային միջավայրի զարգացվածության մակարդակով աշխարհի առաջատար երկրների ցանկում է: Մասնավորապես, այնտեղ է գործում աշխարհում ամենահայտնի արբիտրաժային կենտրոններից մեկը՝ Ստոկհոլմի առևտրային պալատի արբիտրաժային ինստիտուտը, ինչպես նաև Շվեդիայի արբիտրաժային օրենսդրությունը համեմատաբար թարմ և նորարար է, քանի որ լայնածավալ փոփոխությունների է ենթարկվել 2019թ.-ին:

Միջոցառմանը մասնակցել են ոլորտի այնպիսի կարկառուն ներկայացուցիչներ, ինչպիսիք են.

- Քրիստոֆեր Լոֆ - Շվեդիայի արբիտրաժային ասոցիացիայի նախագահ, Շվեդական հայտնի Mannheimer Swartling իրավաբանական ընկերության բաժնետեր,

- պրոֆեսոր Քեթրին Ռոջերս - ակադեմիական մասնակցություն Լոնդոնի Queen Mary, Իտալիայի Bocconi և այլ համալսարաններում (մասնագիտացված է արբիտրների վարքագծի կանոնների ոլորտում, ինչը հատկապես կարևոր է նոր կենտրոնի ստեղծման աշխատանքների համատեքստում՝ արբիտրներին ներկայացվող ճիշտ չափանիշներ և պահանջներ սահմանելու տեսանկյունից),

- Պետրա Կյուրունեն - Ֆինլանդիայի արբիտրաժային ինստիտուտի խորհդրի նախագահ (հատկապես կարևոր է ֆիննական կենտրոնի կառուցվածքային առանձնահատկությունները հասկանալու համար, քանի որ Հայաստանի նոր կենտրոնը, որոշ առումներով նման է լինելու ֆիննականին),

- Պաուլա Հոդջես - Լոնդոնի միջազգային արբիտրաժային դատարանի խորհրդի նախագահ,

- Քրիստին Կամպբել-Վիլսոն - Ստոկհոլմի արբիտրաժային ինստիտուտի գլխավոր քարտուղար,

- ներկայացուցիչներ հայտնի իրավաբանական ընկերություններից՝ Mannheimer Swartling, Bird & Bird, King & Spalding, Stewarts UK, Simmons & Simmons և այլն,

- ներկայացուցիչներ հայտնի ուսումնական հաստատություններից - Queen Mary University of London, University of Cologne (Germany), New York University School of Law, Stockholm University:

Այցի ընթացքում հանդիպում է կազմակերպվել նաև Ստոկհոլմի առևտրային պալատի արբիտրաժային ինստիտուտի գլխավոր քարտուղարի և նրա տեղակալի հետ՝ այցելելով նշված հաստատություն, ծանոթանալով արբիտրաժային գործերի կառավարման տեղի առանձնահատկություններին, քննարկելով արբիտրաժային կենտրոնի գործունեության առանձնահատկությունները, ուսումնասիրելով անհրաժեշտ շենքային պայմանները, աշխատակազմը և այլն:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ կառավարության կողմից 2021թ. նոյեմբերի 18-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների» և 2022թ. հուլիսի 21-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների» ծրագրերով ՀՀ արդարադատության նախարարությունում մեկնարկել է Հայաստանում նոր արբիտրաժային կենտրոնի ստեղծման աշխատանքների ակտիվ

փուլը: Այս կապակցությամբ աշխատանքները մասնագիտորեն ճիշտ ուղղորդելու և դրանց, կենտրոնի փաստաթղթերին և կենտրոնին հեղինակություն հաղորդելու նպատակով նախատեսվում է ձևավորել նաև Խորհրդատվական հանձնաժողով, որի կազմում պետք է ներառվեն ազգային և միջազգային հայտնի մասնագետներ, իրավաբանական ընկերությունների ներկայացուցիչներ:

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարությունը մշակում է «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի փոփոխությունների փաթեթ, որի կապակցությամբ միջազգային նոր զարգացումների ուսումնասիրությունը և փորձի փոխանակումը կարող են էական նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով, որ արբիտրաժային օրենքները առանձնահատուկ են այնքանով, որքանով մեծապես ուղղված են նաև օտարերկրյա կողմերի հետ հարաբերությունների իրավական կարգավորմանը, երբ վերջիններս առևտրային գործունեություն են ծավալում Հայաստանում կամ Հայաստանի ռեզիդենտ կողմի հետ:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Recoverable Signature

X

Arpine Sargsyan

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Արփինե Սարգսյան
07.09.2022 թ.